ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ապրիլի 2013թ. N__-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԼՅՈՒԴՎԻԳ ԴՈՒՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն անվանի բանաստեղծ, հրապարակախոս Լյուդվիգ Դուրյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Թումանյան փողոցի հ.41 շենքին փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԼՅՈՒԴՎԻԳ ԴՈՒՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լյուդվիգ Դուրյանը ծնվել է 1933 թվականի հունիսի 21-ին: Ավարտել է Մոսկվայի Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի բարձրագույն դասընթացները և երկար տարիներ պատասխանատու պաշտոններ է զբաղեցրել Հայաստանի գրահրատարակչության ասպարեզում և բեղմնավոր աշխատանք կատարել հայ հին և նոր գրականության արժեքավոր գրքերի հրատարակման ասպարեզում:

Նա արժանացել է մի շարք մրցանակների, այդ թվում՝ Հովհ. Թումանյանի անվան գրական մրցանակի:

Հայ անվանի բանաստեղծ, հրապարակախոս Լյուդվիգ Դուրյանի բանաստեղծությունները թարգմանվել են աշխարհի բազմաթիվ լեզուներով, նա ակտիվորեն զբաղվել է թարգմանությամբ՝ թողնելով օրինակելի, բարձրարվեստ թարգմանությունների հրաշալի նմուշներ:

Լ.Դուրյանի ստեղծագործությունները, մասնավորապես՝ «Մաշտոց», «Ասք հողի» պոեմները, «Լեռները չեն խոնարհվում», «Եվ մանանա, և նշխարք», «Եռագույն առագաստ», «Արև խաչքար», «Քարե արցունք» գրքերը, ինչպես նաև «Կյանք իմացյալ» հոբելյանական ընտրանիով մնայուն տեղ են հաստատել՝ ընդգծված ազգային-հայրենասիրական թեմատիկայի, ինքնատիպ ձեռագրի և արտահայտչամիջոցների շնորհիվ: Նրա բանաստեղծունների հիման վրա գրվել են բազմաթիվ երգեր:

Հայաստանի Գրողների միության անդամ, անվանի բանաստեղծ, հրապարակախոս, բազմաթիվ մրցանակների դափնեկիր Լյուդվիգ Դուրյանի «Եղեգի ստվերը», «Թալիսման», «Արևագիրք» բանաստեղծությունները լույս են տեսել ռուսերեն լեզվով:

Լյուդվիգ Դուրյանը մահացել է 2010 թվականի հուլիսի 9-ին:

Լյուդվիգ Դուրյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Երևան քաղաքի Թումանյան փողոցի հ.41 շենքին փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացրել Հայաստանի Գրողների միության նախագահ Լ. Անանյանի կողմից, որը ներկայացվել է Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի քննարկմանը և հարցի վերաբերյալ տրվել է դրական կարծիք:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԼՅՈՒԴՎԻԳ ԴՈՒՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լյուդվիգ Դուրյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԼՅՈՒԴՎԻԳ ԴՈՒՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լյուդվիգ Դուրյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ